ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԱԱ//10038-2026
17.03.26

«Հետք»-ի լրագրող
Արեն Նազարյանին
Հեռ.՝ [redacted]
Էլ. հասցե՝ arennazaryan20@gmail.com

Ի պատասխան Ձեր 10.03.2026թ. հարցման

Հարգելի՛ Արեն Նազարյան

Հայտնում ենք, որ Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ինգամյա ծրագրի 6.6-րդ ենթաբաժնով սահմանված են ուղենիշային կարգավորումներ: Համաձայն Կառավարության 2021-2026 թվականների ինգամյա ծրագրի վերը նշված ենթաբաժնով սահմանված կարգավորումների՝ սահմանվել են այն լիազորությունների ոլորտները, որոնք հնարավոր է փոխանցել տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանք են սոցիալական ապահովության, առողջության առաջնային պահպանման, միջհամայնքային և միջբնակավայրային ճանապարհների պահպանության ու շահագործման, հանրակրթական դպրոցների շենք-շինությունների պահպանության և շահագործման ոլորտները:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

Կատարող՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Ն. Անտոնյան
Հեռ. 010511354

նախարարության ցանկում 8.1-ին կետով նախատեսված է «Միավորված համայնքների լիազորությունների և կարիքների ուսումնասիրման հիման վրա լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի մշակում» միջոցառումը:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ կառավարությունը, հետամուտ լինելով 2021-2026 թվականների հնգամյա ծրագրով սահմանված միջոցառումներին, ի դեմս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, 2023 թվականին մշակել և վարչապետի աշխատակազմ էր ներկայացրել «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգի» նախագիծը: Վերը մեջբերվածի համատեքստում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ 2023 թվականի նոյեմբերի 7-ին վարչապետի կողմից ընդունվել է N1111-Ա որոշումը՝ «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին»:

Հարկ է արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023թ. նոյեմբերի 7-ի N1111-Ա որոշման ընդունմամբ Կառավարությունը ինստիտուցիոնալ իմաստով հանձնառություն է ստանձնել իրականացնելու Կառավարության 2021-2026 թվականների հնգամյա ծրագրով սահմանված նպատակները:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, հիմք ընդունելով Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագրի 6.6-րդ ենթաբաժնով սահմանված ուղենիշային կարգավորումները, ինչպես նաև Վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 11-ի N 1111-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը և դրանով հաստատված միջոցառումների ծրագիրը, 2025 թվականին նախաձեռնել էր «Հայաստանի Հանրապետության լիազորությունների ապակենտրոնացման 2027-2031 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները:

Կատարող՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Ն. Անտոնյան
Հեռ. 010511354

Վերը նշված ռազմավարական ծրագիրը վերջերս նախարարության կողմից ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ինչպես ՀՀ կառավարության 2021-2026 թթ. հնգամյա ծրագրով, այնպես էլ դրանից բխող արդեն իսկ ընդունված լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգով և լիազորությունների ապակենտրոնացման ռազմավարական ծրագրով հանրակրթական դպրոցների մասնագիտական (բովանդակային) կառավարման կամ մարզային բժշկական կենտրոնների կառավարման ապակենտրոնացում նախատեսված չի եղել, ուստի այդ օղակներում վերջերս կատարված կառավարման կամ ենթակայության փոփոխությունները որևէ կերպ պայմանավորված չեն կառավարության կողմից որդեգրած լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականության հետ և ամբողջությամբ գտնվում են այդ ոլորտների քաղաքականությունը մշակող հանրապետական գործադիր մարմինների իրավասությունների և մշակվող քաղաքականության տիրույթում:

Ինչ վերաբերում է իրական ապակենտրոնացման գործընթացի առկայության վերաբերյալ հարցին, ապա սույն գրության շրջանակում ներկայացված լիազորությունների ապակենտրոնացման հայեցակարգը և լիազորությունների ապակենտրոնացման ռազմավարական ծրագրի նախագիծը, ըստ էության վկայում են այն մասին, որ կառավարությունը, հանձնառու լինելով իր կողմից որդեգրած քաղաքականությանը, կոնկրետ քայլերով՝ տվյալ դեպքում ինստիտուցիոնալ մակարդակում կայացված որոշումներով, առաջ է տանում ապակենտրոնացման քաղաքական օրակարգը, որը «Հայաստանի Հանրապետության լիազորությունների ապակենտրոնացման 2027-2031 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում հիմքեր է ստեղծելու լիազորությունների ապակենտրոնացման փաստացի գործընթացի կազմակերպման և իրականացման համար: Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացի իրականացման միջոցառումները, որոնք պլանավորվում է իրականացնել 2027-2031թթ ընթացքում, նախատեսված են «Հայաստանի Հանրապետության լիազորությունների ապակենտրոնացման 2027-2031

Կատարող՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Ն. Անտոնյան
Հեռ. 010511354

թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծով, որի ընդունման արդյունքում այդ միջոցառումները կիրականացվեն համայնքային մակարդակում:

Ինչ վերաբերում է մարզպետների աշխատակազմերի հնարավոր օպտիմալացման և ՀՀ պետական բյուջեով մարզպետների աշխատակազմերին տրամադրվող տարեկան հատկացումներին, կարծում ենք, որ մարզպետների աշխատակազմերի մասով վերջին տարիներին կատարված կրճատումները բավարար են այս պահի դրությամբ ՀՀ մարզպետներին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների պատշաճ իրականացման և կառավարության տարածքային քաղաքականության սահմանադրական պարտավորության ապահովման և իրագործման համատեքստում, ուստի լրացուցիչ կառուցվածքային կրճատումների անհրաժեշտությունն այս պահին բացակայում է:

Հայտնում ենք նաև, որ Հանրային ծառայության մասին օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ՀՀ մարզպետների պաշտոնները հանդիսանում են պետական վարչական պաշտոններ: ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվածի համաձայն Կառավարությունը մարզերում իր տարածքային քաղաքականությունն իրագործում է մարզպետների միջոցով: Մարզպետներին նշանակում և ազատում է Կառավարությունը: Իսկ Հայաստանի Հանրապետությունում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը կառավարող քաղաքական ուժն է:

3/17/2026

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 Ա. Ավետիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կատարող՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Ն. Անտոնյան
Հեռ. 010511354

Կատարող՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Ն. Անտոնյան
Հեռ. 010511354